2021-2022 ուստարվա
Հաշվետվություն

2021-2022 ուտարվա ..Աբովյանի կրթահամալիր .. ՊՈԱԿ-ի գրադարանն ապահովված է եղել բոլոր դասարանների դասագրքերով: Դպրոցում կա 27 անուն դասագիրք:
Ճիշտ ժամանակին դասագրքերը բաշխվել են աշակերտներին:
2021-2022 ուտարում ներդրման տրված դասագրքերի ընդհանուր վարձավճարը կազմել է 2 786 690 դրամ: Սոցիալապես անապահով ընտանիքներին և ծնողազուրկ երեխաներին / թվով 99 աշակերտ/ դասագրքերը տրվել են զեղչով՝ 259000 դրամի չափով/ցուցակը կցվում է հաշվետվությանը/: 5-12-րդ դասարանների աշակերտների ծնողների հետ կնքվել է պա յմանագիր դասագրքերի հատկացման մասին:
ՈՒսումնական տարվա ընթացքում գրադարանից օգտվել է 230 ընթերցող, որից 70-ը ուսուցիչ, 160-ը՝ աշակերտ: Գրադարանն ունի ակտիվի և գրքասերի ակումբ, որոնց շնորհիվ կատարվում են դասագրքերի և գեղարվեստական գրքերի նորոգում:
Դպրոցի գրադարանում կա թե՛ հայերեն, թե՛ ռուսերեն գրականություն: ՈՒսուցիչներն ու աշակերտներն օգտվում են դասագրքերից, գեղարվեստական գրքերից, տարբեր բառարաններից՝ ուղղագրական, բացատրական, ինչպես նաև հանրագիտարաններից; ՈՒսուցիչները պարբերաբար հաճախում են գրադարան, օգտվում մեթոդական ձեռնարկներից, ծրագրերից:
Աշակերտների միջոցով կազմակերպվել է միջոցառումներ ,, Գիրք նվիրելու օր,,՝ 3-րդ Ա դասարանում, ,,Ճուտիկ,, մանկական օպերան , որը ներկայացրել են 2գ դասարանի աշակերտները: ,,Փառք մերօրյա հերոսներին,, անցկացվել է միջոցառում արհեստագործական ուսումնարանի աշակերտների կողմից:
ՈՒստարվա ավարտին բոլոր դասարանները դասղեկների ղեկավարությամբ գրադարանին հանձնեցին դասագրքերը, գեղարվեստական և մանկական գրականությունը:

Գրադարանավար՝ Լ. Վարդանյան